



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲՍԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 34րդ տարեշրջանի (1918 օգոստոս-1919 յուլիս) բաժնորգագրին է 20 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԻՍԻԿ: Ամսական բաժնորգագրին է 2 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 1 ֆրանգ. Կամակ կամ դրամ զրկել այս հասցեով.

M. PORTOUKALIAN
Directeur du journal Armenia
MARSEILLE (France)

ԼԴ ՏԱՐԻ ԹԻԻ ԴԾ

1919 ԱՊՐԻԼ 2 ԴԶ. (Հ. Տ. 1919 Մարտ 20)

ՊՆՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, հաճառուելով և կամ մամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցման 1 միջակ գիրը 1 անգրիմ կարժէ. 1 գիրագիրը 2 անգրիմ: Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadié, 17

ԲՈՎ ԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքական խաղեր. — Կիլիկիայի Տ. Մահակ Բ. Կամոնդիոսի հետագիրը. — Փարիզի Հայ Համագումարին համար. — Հայ բժշկական առաքելութիւն մը Կիլիկիայի համար. — Ժընէվայի քրոնիկ. — Հայ որբերին համար հանդէս մը Նիսի մէջ. Կամակներխաղիւն (Հուլ. Փատուա). — Եւրոպայի Առաջնորդին հիւանդութիւնը. — Քաղաք մը անգլիական եւ ամերիկեան թերթերէ: — Հայաստան յորուածներ Ֆրանսերէն թերթերի մէջ. — Ճակատամարտ օրաթերթը. — Վահան Ձերագ. — Մահագոյժներ (Տոգը. Թիւրքական խան. — Ա. Տէր (Մարտեան). — Խաղաղութեան Խորհրդաժողովը. — Հունգարիա. — Կամակատուի. — Նոր ստացուած հրատարակութիւններ. — Ծանուցումներ:

ԹԻՒՐԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Թիւրքական զիւանագիտութիւնը՝ այսինքն կեղծաւորութիւնն ու երկերեսութիւնը՝ մեծ տէրութիւնները խաբարելով և իրար դէմ զըրգուելով յաջողած էր մինչև այժմ երկարաձգել իր հիւանդոտ և մահահոտ կեանքը: Բայց միթէ՞ տակաւին չէ հասնցած որ աւելի լաւ կընէր եթէ հանդարտութեան մէջ աշխատէր կարելի եղածին չափ ինք իր վէրքեր դարմանել. փոխանակ նենգամիտ խաղեր խաղալու մասին մտածելով ի դուր ժամանակ կորսնցունելու: Սակայն Տաճիկը չկրնար այլևս ոչ ոքին խաբել և բարեկամներ ու շահակիցներ իրար դէմ զրգուել, ինք օգտուելու համար: Այդպիսի խաղեր միշտ ի վնաս իրեն պիտի վերջանան: Կիլիկիայէն եկող ճանրորդներէ և թղթակցութիւններէ կիլիկիանք որ այնտեղ տակաւին իշխանութիւն բանցնող թիւրք վարչական պաշտօնեաներ կը զրգուեն մահէմտական խուճանը Հայերին դէմ և մասնակի կոտորածներ այ յառաջ բերած են մէկ երկու տեղ Կիլիկիայի և Սիրիայի մէջ ինչպէս հրատարակած էր փարիզի «Դան» օրաթերթին որ Հայերը զգուշութեամբ կը վարուին և պէտք է վարուին թիւրքերի զըրգըրութեան հրապուրիչ թակարգը:

ներին մէջ շինարու համար. բայց երբ կը տեսնեն որ իրենց ծնողներն ու ազգականները անզթարար խողխողող գազաններ նորէն կը սկսին իրենց հին իրազեք խաղալ, բացառաբար կրնան դառնալ անպիտի գիւրաբար Հայ անհասանելի ալ որոնց զգացումը աւելի ուժով եղած լինի քան զատողութիւնը, ինչպէս այդ կը պատահի ամէնէն աւելի քաղաքակրթութեամբ ազգերին մէջ ալ:

Ուստի թիւրքական խաղերին վերջ տալու և ցաւալի միջադէպներին աւելի չորոշելու համար, պէտք է փութալ զինաթմափ ընելու թիւրքերը և իրազուտէր հայ պաշտօնեաներին յանձնելու այդ հայկական երկրի վարչութիւնը:

Մ. Փ.

ԿԻԼԻԿԻԱՅԻ Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ՀԵՌՈՒՅԻՐԸ

Կիլիկիայի Շնորհազարգ Կաթոզիկոս Տ. Սահակ Բ. որ Ատանաէն Քահիլէ եկած է, Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահին զրկած է հետեւեալ հեռագիրը.

Իմ արտոնքս ու Պաղեստին, Սիրիա, Կիլիկիա ու Եգիպտոս վերջին շրջազայուածեանս միջոցին, ուրախութեամբ տեսայ որ բոլոր Հայերը երախտագիտութեամբ կորսնեն դաշնակից յաղթական զորաբանակները, իրաւունքի եւ Ազատութեան պաշտպանները. տեսայ նաեւ իրենց անխախտ հաւատքը թէ արդարութեան յաղթանակով պիտի վերահաստատուի ազատ Հայաստանը Կիլիկիայի հետ անբաժան կերպով, իբրեւ օրինաւոր վարձատրութիւն մարտիրոս եւ դիւցազն հայ ժողովուրդի անհուն զոհողութիւններին: Համոզուած եմ որ Հայերի այդ հաւատքի տահաթին քանդումը աւելի սոսկալի քան մը պիտի լինի քան իր դարաւոր մարտիրոսութիւնը: Հայրենիքի եւ ազատութեան համար մեռած հարիւր հազարաւոր հերոս եւ մարտիրոս Հայերի գերեզմաններին մէջէն կոչ կրնամ բերստանայ աշխարհին, նուիրագործելու համար հայ ազգին ունեցած այդ հաւատքը:

ՍԱՀԱԿ Կամոնդիոս Կիլիկիայի

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՀԱՄԱՐ

Կիլիկիայի եւ Հայկաի Հայերի կողմէն Փարիզի Հայ Համագումարին համար պատուիրակ ընտրուած Տիար Տօգը-Սթը Ալթունեան անցած հինգշաբթի օր (մարտ 27) Մարտիլ հասաւ եւ փուճաց Նոյն երեկոյ ժամը 6½ ի կառախմբի գնացքով մեկնիլ Փարիզ իր պաշտօնի գործադրութեան համար: Իրեն կողմէկցեր իր դուստրը, ամերիկեան կրթութիւն առած շնորհալի օրիորդ մը: Տօգը. Ալթունեան իրեն հետ բերած է իր քարտուղարի պաշտօնով Տ. Արամ Ալթունեանը, Կ. պօլսէն Հայկա տարագրուած հայ հրապարակագիրներէ մին:

Տօգը. Ալթունեան կը պատկանի Փոքր Հայքի (Սեբաստիա, Եւրոկիա, Ամասիա եւ այլն) կողմեր հին ժամանակներէ ի վեր իրենց բժշկական արհեստով մեծ համբաւ ունեցած Ալթունեանների գերդաստանին որոնց մէկ թիւն ալ գնացեր արձակուել է Հայկա: Նոյն գերդաստանի հետ ինամութեամբ կապուած են նաեւ Սեբաստացի նշանաւոր բժիշկներ Տօգը. Սիւնիներ որոնք իրենց բժշկական ուսումը ամերիկեան համալսարանների մէջ աւարտել են ժամանակ մը այնտեղ աշխատել յետոյ, ամերիկեան հեշտալի կեանքը թողած եւ հայրենիք վերադարձած են աւելի օգտակար լինելու համար իրենց ազգին:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Ժընէվի Հայ գաղութը իր ծախքով Կիլիկիա կը զրկէ հայ բժիշկներէ կազմուած Թանձնախումբ մը, բժշկական և առողջապահական գիւրութիւններ ընձայելու համար այնտեղ գտնուող զժրագր Հայերին:

Անցած շաբաթ Ժընէվէն Մարտիլ հասան այդ առաքելութեան անդամները, տոգղեօրներ Հայկ Գըրիգորեան, Մնացականեան, Քաջրեանի և Հայրանեան, որոնց հետ միացաւ վերջին պահին Ժընէվէն նոր եկած հայ բժիշկ մ'ալ և հինգը միասին ուրբաթ օր (մարտ 28) Մարտիլէն մեկնող շոգեհատով գնացին Կիլիկիա:

Մեծ գովեստի արժանի է Սիւրի Հայերի այս ձեռնարկը որոնք կերևի թէ գիտեն լուիկ միջիկ պատրաստել և կատարել իրենց մտադրած գործը:

Ժամանակէ մ'ի վեր հրատարակուած է թէ Փարիզէն այդպիսի բժշկական առաքելութիւն մը պիտի երթայ Կիլիկիա. բայց դեռ չգործադրուեցաւ այդ լուրը: Կերևի թէ Փարիզցիները շատ աւելի մեծ ու ընդարձակ կերպով գործը պատրաստելու վրայ են կամ գուցէ մեր մայրաքաղաքի հայ բժիշկները զըրկար կը շարժին իրենց տեղէն:

Այսու ամենայնիւ, Փարիզ գտնուող Հայ Ազգային Պատուիրակութիւնն է որ Ֆրանսական կառավարութեան մօտ իր գիւրմտներով գիւրութիւններ ընձայած է Սիւրի բժշկական հայ առաքելութեան Ֆրանսա գաղուն և սակէ ալ Կիլիկիա անցնելուն:

ԺԸՆԷՎԱՀԱՅ ՔՐՈՆԻԿ

Բեղմնաւոր թէյ վաճառքով (thé-vente) մը զոր վերջերս կազմակերպեց քաղաքիս Hôtel Beau-kivageի սրահներուն մէջ, Ժընէվի Հայ Տիկնանց Միութիւնը արժանի հերքում մը տուաւ այն կարծեցեալ անտարբերութեան զոր սմանք կը վերագրէին անոր: Իրենց կարգին, մեր զուիցերիացի անձնուէր բարեկամները, որոնց աննկուն նահապետն է Պ. Լէօփօտ Ֆալը, անգամ մըն ալ իրենց նիւթական աջակցութեանը միացուցին վեհանձն համակրանք մը որուն ամենէն պատուաբեր արտաշայտիչը եղաւ Պազարի նախագահուհին, Mme Michelli-Ador, Զուիցերիոյ Հանրապետութեան նախագահին քոյրը: Այնուաւիտ նախագահուհին չբաւականացաւ անուանապէս հովանաւորելով հանգէտը, այլ - ինչպէս վայել է մեծ սիրտերու - իր գործօն աջակցութիւնը բերաւ պարիս, հայ տիկնաներուն հետ քով

քովի Հազիւ պէտք կայ հոս իրեն լսելի ընելու մեր երախտագէտ ձայնը, պարտք մը որ այնքան սրտառուչ կերպով պիտի կատարեն մեր որբուկները իրենց գոհունակ ազգակներովն ու արցունքոտ ժպիտներովը:

Տէր և Տիկին Maier, յիշեալ պանդոկին սեփականատէրերը, մեր գաղութին հաւաքական շնորհակալութեանը արժանի են: Առաջին անգամը չէ որ այս բարեսիրտ ամուլը իր սրահները ձրիաբար կը տրամադրէ հայ Տիկնանց Միութեանը: Տիկին Maier չուզեց սակայն այսքանով սահմանափակել իր ազնուութիւնը. ան ստանձնեց նաև թէյաբաշխումի հսկողութեան հոգը:

Չեմ գիտեր թէ ո՞րքան շահեկան կ'ըլլար տալ հոս պնդարին ամբողջական նկարագրութիւնը, բայց, ի պատի կազմակերպող տիկիններուն, արդար է բոլոր առարկաներուն ճշիւ գանձագրութիւնը և մանաւանդ այն խնամքը որով պատրաստուած էին այդ իրեղէնները, ազնուական ճաշակի մը հետ հարազատ գորով մը կը մասնէին ժընէփի հայ տիկիններուն և օրիորդներուն սիրտին մէջ:

Գահիճին մէջ բոլորածն շարուած էին հաշուետեղանները, զարդարուած հայկական սնով: Ահա անոնցմէ մէկը սրուն վրայ ձիւնեղէն փրփուրներու պէս կը վէպփէտին տեսնա գործարարներու և շլարչներու բազմաթիւ տեսակներ: Տիկիններ Գարակէօզեան և Թումանեանն են որ, օգնական օրիորդներու հետ, գանձաքէ կը ներկայացնեն հիւրերուն: Նորը մանուկներ, գոյնզգոյն լուսափողներ (abat-jour), ասեղնաբարձեր (pelote), թափշէ ժապաւէններով շրջանակուած սիրուն պատկերներ, փխրուն թիկնաբարձեր և ուրիշ կարգի խառնուածի գործուածքներ պրիսմակի մը տեսքը կուտային իրենց սեղանին:

Ահա շքանդանը որ «ամենաբերնորոց պտղոց գիցն վանաորի» բերքերուն տակ կը հեայ... Տիկիններ Պապահան, Լոսեան և Շիրինեանն են որ կրցած են այս հրապուրիչ տեսքը տալ անոր: Հայկական ճաշակով պատրաստուած անոյնները, զգլխիչ օշարակները և զանոնք մատուակող տիկիններուն հիւրընկալ հաճոյակատարութիւնը յաջողեցան առինքնել յաճախորդներու վայելուչ բազմութիւն մը որ բնականօրէն քաղցրասէր մեղրուներու հող մը կը յիշեցնէր: Գիշ մը անդին կը գլուխուէր ասոր քոյր-սեղանը, բեռնաւորուած կարկանդակներով, հաստեայներով և արեւելեան ու եւրոպական բազմատեսակ խմորեղէններով: Տիկիններ Չամբերթեան և Նազաշեանն են որ զանոնք կը մատու-

աւեն նրբաճաշակ հիւրերուն: Միս սեղանները նուազ գրաւիչ չէին: Գորգերով կազմուած տաղաւարի մը մէջ Օրիորդ Ալաթօն պէյ արեւելեան սուրճ կը սպասարկէր:

Թող ներուի ինձի եթէ կը մտնամ շատ անուններ: Բայց ո՞վ է այն հայ տիկինը կամ օրիորդը որ, անձնուիրութեան մը պարագային, մտածած ըլլայ իր անունը հրատարակուած տեսնելու տեղին փառքին վրայ. և այս բոլորիս երբ իրենցմէ ներողութիւն կը խնդրեմ, չե՞մ վերադարձնուի արդեօք իրենց զգացումներուն անհրճութիւնը:

Հայ օրիորդները, իրենց փութկոտ սպասարկութեամբը և այն մեղուածան աշխատութեամբը զոր ամիսներէ ի վեր ինքզինքնուն հարկազրամ էին պողարին յաջողութեանը համար, գիտակից հայրենասիրութեան մը յուշիչ ապացոյցը բերին: Հայաստանի մտաւրատ ազատագրումին յոյսը, որ այս հանգչեփին զերազոյն նախագահն էր, կը ցոլար անոնց աչքերուն մէջ որոնց թաւաշին գեղեցկութիւնը հայութեան երգուհայ թշնամիէն, փիւռ լոթիէն իսկ, հիացումը մերամաղձոտ մտածում մը ինչի:

Հապա ի՞նչ ուզերձով մտանալ հայ երկսեռ մանուկներու երամին որ անմասն չմնաց գործին պատուաւոր յաջողութեանը մէջ: Եթէ մէկն տարբերական աղջիկներ, ոմանք հայկական տարազի մէջ, իւրաքանչիւրը բազուկէն կողով մը կախած, որտա գրաւակներով, կամ սիկառէթ կամ վիճակախաղի տոմս կամ Միսնուկ Հայաստանի քարթ մը կ'առաջարկեն այցելուին: Ո՞վ ըսած էր անոնց որ այդ օրը պուպրիկներ հագնեցնելու խնամքէն աւելի սրտմտիկ հոգեր — հեռաւոր քոյրեր և եղբայրներ հագուեցնելու հոգեր — իրենց աշխատութիւնը կը պահանջէին: Գորովի աւելի թանկագին ապացոյց կարելի՞ էր սպասել այս փոքրիկներէն՝ հանդէպ իրենց մանրիկ քոյրերուն և եղբայրներուն ունեւորի հեծուկա թուրքի վայրագ ջանքին, ըմբոստ ծաղիկներու պէս շարունակեցին բողբոջի Սասունի ապառաժներուն վրայ, Միջագետքի կիզիչ աւազներուն մէջ և նոյն իսկ իրենց վտարանդի մայրերը հիւրընկալող զրահաւորներուն վրայ:

Որոշ չեմ գիտեր Պազարին բերած հասոյթը, բայց որոշ գիտեմ որ ան 16000 Ֆրանգէ աւելի եղած է: Անուշտ Տիկնանց Միութիւնը առաջին պատեհ վայրկեանին զանիկա պիտի հասցնէ աղէտեալներուն: Ուրախութեամբ կը յիշատակեմ նաև Տօք. Շէրիտեանի հրատարակած պրօշիւրը որ պողարին իրեղէններուն շարքին մէջ կը գտնուէր, և որով յարգելի տօքթէօրը ջանախախիչ

հերքումը կուտայ թուրքի մը սնտի զրպարաութիւններուն, զրպարատութիւններ որոնք նոյնպէս պրօշիւրի ձեռով լոյս տեսած էին ժընէփի մէջ: Փափաքելի է որ հայ մամուլը չուշանար հրապարակով շնորհաւորելու մեր հայրենակիցի արթնա մտութիւնը, հետեւելով ժընէփի մասունքին օրինակին:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները բոլոր աշխատող և օժանդակող անձնաւորութիւններուն:

Եղուարդ ՊՅԱՃԵԱՆ  
Ճընէփ, 25 մարտ 1919

**ՀԱՅ ՈՐԲԵՐԻՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԷՍ ՄԸ ՆԻՍԻ ՄԷՋ**

L'Éclairer de Nice լրագրի մարտ 14ի թուէն կը տեղեկանանք որ Նիսի «ԹԵԼԵՆԵԿԵՍՏՈ» ի սրահին մէջ մարտ 12ի չորեքշաբթի օր հանդէս մը եղած է, հասոյթը պատերազմէն մ'նացած հայ որբերին նուիրելու նպատակով: Բարեսիրտ տիկիններ եւ օրիորդներ, որոնց մէջ կը հանդիպինք հայ անունի մ'ալ, Օրիորդ Միլապէտեան (Մոնղէ Գարիօ թատրոնէն), Ծաղիկներ, հայկական փոքրիկ դերակներ, յայտագիրներ ծախած են այցելուներին, ինչպէս եւ վիճակահանութեան տուներ որոնց կ'ըր բաշտիլը յետոյ պիտի որոշուի: Նշանաւոր երգիչներ, երգչուհիներ եւ նուագաճուներ կարգաւ երեւցած են ըմբին վրայ, որ հայկական եւ համաձայնական տէրութիւններին դերօժակներով կարգարուած էր, եւ հիացում պատճառած են ունկնդիրներին:

Սրահին փայլը կաւեյնէն Տ. Վարդան Մախոխեանի հոն գետեղած ծովանկարները: Իր «Բէնը տ'Արմէնի» որ դաշնակի վրայ նուագելով ընդհանուրին յուզումնայից հիացում մը պատճառեց, հայ արուեստագէտին իբրեւ երգահան եւս ունեցած տաղանդին նոր ապացոյց մը կընծայէր:

Հանդէսին հովանաւորող Յանձնախումբին մէջ կը գտնուէին Ար Մարի-Գլիի նախագապետը, Նիսի քաղաքապետը իր տիկնոջ հետ մէկտեղ, զօրաբաժնի հրամանատարը իր տիկնոջ հետ մէկտեղ, Նիսի կամուրջի եպիսկոպոսը եւ բողոքական պատուելիները, Ֆրանսական Պանգի տեսուչը, Անգլիայի, Միացեալ-Նահանգների, Իտալիայի, Պէժիքի, Սերպիայի, Ռումանիայի եւ Յունաստանի հիւպատոսները, «Էպէթօր սը Նիս» եւ Բըդի Նիսուա լրագիրների խմբագրապետները եւ այլն եւ այլն:

**ՆԱՄԱԿՆԵՐ ԻՏԱԼԻԱԷՆ**

Հոռ, 29 մարտ 919  
Քաղաքս հասած են Պօլսահայերու կողմէն Ազգային Պատուիրակութեան մօտ ներկայացուցիչ Տիար Պ. Մըլլըրեան և Տիար Տօքթ. Սինապեան, որոնք քանի մը կարևոր անձերու այցելութիւն տալէ յետոյ պիտի մեկնին Բարիդ: Յիշեալ պատուիրակները ծանօթ են մասնաւորապէս Պօլոյ հայ կաթողիկէ շրջանակներուն մէջ:

Հաւաստի աղբիւրէ կիմանամ որ Իտալիոյ հայկական գօմիթէն և Հայոց անկա-

խութեան համար կազմուած խտուական գօմիթէն միացած ներկայացում մը կը պատրաստեն, որուն հասոյթը պիտի յատկացուի հայ տարագրեալներուն ու որբերուն: Ներկայացման միջոցին պիտի խօսի նախկին նախարարապետ On. Luzzatti.

Կը լուսացուի որ հանդէսին նախագահէ գեղեցիկ իշխանուհի Jolanda:

ԱՕՍ

Փատուա, 22 մարտ 1919

Նախապէս հրաւիրուած ըլլալով Պօլսոյ ժողովուրդային համալսարանի (Università popolare) կողմէն, Իտալիայի Հայ Ուսանողական Միութեան անդամ Տ. Մ. Խանապէտեան լիշեալ համալսարանին մէջ, ամսոյս 13ի հինգշաբթի օրը, Իտալիոյ լեզուով բանախօսութիւն մը ըրաւ, նիւթ ունենալով Իտալիան հայ վերածնունդեան գործին մէջ:

Համալսարանի հայ թագաւորութեան՝ սիսական վայրագ ժողովուրդներէ ունակուի եղած՝ կործանուած այքէ անցունել վերջ, իշեց թէ ի՞նչպէս մեր ցիրուցան ժողովուրդը հիւրասիրուեցաւ Իտալիոյ գանազան քաղաքներու մէջ, մասնաւորապէս վենետիկոյ Հասարակապետութեան, վայելելով հոն ազգային եւ կրօնական ամէն առանձնաշարժումներ եւ դիւրութիւններ եւ մասնաւորապէս նըւերուելով հայ ազգին Ս. Ղազարու կըղզեակը ուր Միսիթար եւ իր յաջորդներ վերաստեղծեցին ազգային պատմութիւնը, գրականութիւնը եւ ստաւրեցին ազգային կեանքի տեսականացման:

Յիշեց Մուրատ — Ռաֆայէլեան վարժարանը որ նուիրեց ազգին բանաստեղծներ, արուեստագէտներ եւ հայրենասէրներ որոնք սնած եւ մեծցած վերածնունդ Իտալիոյ յեղաշրջական մեծ դէպքերուն մէջ, քարոզեցին եւ տարածեցին մեր ժողովուրդին՝ միւլութեան եւ երգարութեան հոգին ու նպաստեցին ազգային գոյութիւնը երաշխաւորելու:

Իսուն բազմութիւնը հետաքրքրութեամբ մտիկ ըրաւ բանախօսին, յաճախ ընդմիջելով զայն եւսանուով ծափելով այն ամէն ցոյցերուն ատեն ուր դուրս կուգար Իտալիոյ արժանիքը Հայոց վերածնունդին մէջ, արժանիք մը որը հաւանաբար կ'անգլխտանար այս ժողովուրդը:

Իսուն ծափերու մէջ վերջացաւ ճառը եւ բազմաթիւ Տեարք եւ Տիկնայք վուծացին շնորհաւորել բանախօսը:

Պ. ՊԱՊԻԿԵԱՆ

**ԵՒՐՈՊԱԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

Ցաւով կիմանանք թէ Եւրոպայի Առաջնորդ Գեր. Գէորգ արքեպ. Իւթիւնեան որ ժամանակէ մ'ի վեր հիւանդ պատկած էր, ծանր վիճակի մը մէջ կը գտնուի այժմ: Կըսուի թէ անդամալոյծ եղած է:

Լանտոնի Հայերի հոգևոր հովիւը Տ. Աբէլ արքեպ. Աբրահամեան, Սրբազանի յայտնած ցանկութեան համեմատ, փութացած է երթալ Մանչէսթըր զինք տեսնելու:

ՔԱՂՈՒԱԾ ՄԸ ԱՆՊԼԻԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹԵՐԹԵՐԷ

Նիւ-Եօք-Հէրլը (Փարիզի հրատարակչական օրաթերթին մէջ կը տեսնուին յաճախ լուրեր Հայոց և Թիւրքիայի մասին:

Մարտ 13ի թուին մէջ «Հայկական նպաստի հարցեր» խորագրով հեռագիրը կ'ըսէ. «Նախկին նախագահ թեֆրի նախագահութեան տակ միթինի մը տեղի ունեցաւ երէկ Hyppodromeին (ձիարշաւանոց) մէջ, ուր խօսեցան Հէնրի Մարկէնթօ՝ Կ. պօլսոյ ամերիկեան նախկին գեսպանը, Ճէյմս Ճէրըրտ՝ Պէսլինի ամերիկեան գեսպանը և Էյպրէմ Իլքըս. հաւաքուցեալ 50,000-առար, որ շարունակուելով ապա քաղաքին մէջ բարձրացաւ 2,600,000 տոյարի, նը պատսոյու համար Հայերուն, Սիւրիացիներուն և Յոյներուն:

Մարտ 17- (հեռագիր Պօլսոյ իր թղթակցէն). վերջերս գաշնակից Տէրութեանց բարձրագոյն գովիթէն Թուրքերուն հրամայեց վերադարձնել բոլոր հայ մանուկները զորս վերցուցած էին Հայաստանի ջարդերուն ժամանակ: Ասոր վրայ Թուրքերը իսկոյն 2000 հայ մանկոց հաւաքեցին Մալթիա քաղաքին մէջ ուր ահաւի ջարդ եղած է) յանձնելու քրիստոնեաներուն՝ որոնք այս մասին զեռ պատրաստուած ու պատուիրակներ զրկած չէին ընդունելու որբերը: Այս որբերէն արդէն 10,000 կան Կ. պօլսոյ մէջ Ամերիկեան նպաստից Յանձնախումբը պահանջեց որ Թուրքերը պարտադրուին 3 ամսուայ ուտելիք տալու այս որբերուն: Ինչպէս նաև վերադարձնեն գոզցած բոլոր ինչքերն ու պարպեն Հայոց պատկանեալ բոլոր գրաւած տուները:

Սոյն Յանձնախումբը ուղարկեց Փօքը Ասիոյ ներսերը 20 վակոններէ բաղկացեալ շոգեկառք մը մթերքներով յոցուն նպաստներու համար: շոգեկառքը մեկնեցաւ անգլիական զինուորներու պահպանութեան տակ: Բէնսաբօլա շոգեկառքով ալ Պէյրութէն նպաստներ դուրս հանուցան. կա. ընտր մաս մըն ալ զրկուցեալ կող կաս:

Մարտ 18.— Կ. պօլսոյ իր թղթակցը միևնոյն օրուան մէջ քաջած չորս հեռագիրներուն մէջ կ'ըսէ ի միջի ալոց. «Ամերիկայի միակ ժուռնալիստն եմ հաս և շրջապատուած շարունակ թրքական վերին անձնաւորութեանց կողմէ, որոնք անընդհատ կը խնդրեն ինձմէ որ Ամերիկեան լինի ամբողջ Թուրքիոյ պաշտպանը:

Թուրքիոյ վիճակը շարագուշակ է, կըսէ թղթակցը, և անտեսական վիճակը օր քան օրէ կը վատթարի: Այստեղ եւրոպական և ամերիկեան կարծիքն ալ համակիր է ամբողջ Թուրքիոյ մեծ պետութեան մը խնամակարութեան յանձնուելուն, մի քանի տարուան համար՝ զայն կազմա-

կերպելու և վերականգնելու և անկէ յետոյ նկատի առնելու ներքին ինքնավարութեանց պահանջներու իրն: զիրենքը և լուծում տալու անոնց կարելի եղած չափով: Այսպէս բոլորի վստահութիւնը Միացեալ Նահանգներուն վրայ է, կըսէ թղթակցը, որով Ամերիկեան պիտի ոտանձնէ մեծ պատասխանատուութիւններ Թուրքիոյ մէջ, ուր կը գտնուի արդէն իր մեծագոյն շահը):

Գալով Կ. պօլսոյ միջազգայնացման հարցին՝ Յոյները ուրախ են, իսկ Թուրքերը թէև տարակուստ՝ կը սարսափին: Այս առթիւ թրքական համայնաբանի 500 ուսանողներ ցոյց մը կատարեցին Կ. պօլսոյ մէջ, բողոքելով մեծ Տէրութեանց թէ Պօլսոյ Թուրքիոյ գլուխն, ուղեղն ու հոգին ըլլալով, անոր կորուստը մեծապէս զգնուակ ազդեցութիւն մը պիտի ունենայ մահմտական աշխարհին վրայ: Իսկ թուրք գահաժառանգը ինձ ըսաւ թէ ինք կը յուսայ որ մեծ տէրութիւնները պիտի յարգեն նախագահ վիլլիսի սիլըբուսները, քանի որ գաշնակիցները այս վերջերս օրմանալի միջոցաւ յայտարարութիւններ ձգեցին թէ իրենք չեն կուտիր Թուրքիոյ ժողովուրդին դէմ, ալ Գերմանիոյ կողմէ վարուած մեքենայութիւններուն դէմ:

Թրքական բոլոր բանակները այլևս անձնատուր եղած են Գաշնակիցներուն: Կովկասի ու Թուրքիոյ մէջ վերջին թրքական բանակներն ալ անձնատուր եղան Անգլիացիներուն: Բրիտանական զօրքերը կը բռնեն այժմ Կովկասը Պաքուէն մինչև Պաթմա: Զինադադար կնքուցեալ Հայերու և վրացիներու մէջ, Անգլիացի զօրքեր և Ամերիկեան նպաստից Յանձնախումբի կովկասի պետը Միսդըր կրէսէյ գերի ընկած են պոլշե վիկներու ձեռքը վատիկովկասի մէջ: Լուր առնուցեալ որ անոնք ողջ են և Աստրախան տարուած, թէև մէնէրալ Տընիքէն կը բռնէ հիւսիսային Կովկասը՝ վճռա գետէն մինչև վլատիկովկաս: Ամերիկեան զինուորական լրատու միտին մը Պօլսոյ հասաւ Ռուսիա մեկնելու համար:

Այժմ Կ. պօլսոյ այնքան խռնուած է ընկալութեամբ որ ընկալարան գրուելով գժուարին է այնպէս որ Ամերիկեան նպաստից Յանձնախումբի 241 անդամները հոս հասած ատեն ստիպուցան տեղաւորուել ամերիկեան Ռուսիոյ և ալլկանց գողէճներու սենեակներուն մէջ և մաս մը իշխանաց կղզին տեղ գտաւ:

Քաղեց Հայկ Պ. ՃԵՐԲՈՒՆԵԱՆ

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԹՅՈՒՆՈՒՄԸՆԵՐ ԳԵՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԵՐԷ ՄԷՋ

Թուրքական գովիթէներ ջանքերը Հայ անունը արատաւորելու համար Քրիստոսական մամուլին մէջ ի գուր կանցնին. այնքան բացորոշ և անպաշտպանելի են Թուրքերի անիրաւութիւնն ու գործած բարբարոսութիւնները որ փոքրիշատէ ողմտու-

թիւն ունեցող ոչ մէկ ընթերցող չկրնար հաւատք ընծայել Թուրքերին ի նպատակ գրուած չքմեղանքներին: Ուստի եթէ երբեմն երբեմն մի քանի լրագրիներէ էջերին մէջ վերապահութեամբ մէկտեղ հիւրընկալութիւն կրնձայուի Բիէր, Լոթիի նման գրողների թիւրքապաշտպան գրուածներին, Քրանսերէն Թերթերն ընդհանրապէս, թէ՛ Փարիզի մէջ և թէ՛ գաւառները, լեցուն են հայաստան գրութիւններով: Շատերի մէջէն մի քանին միայն յիշենք հետաքրքիրներին համար: Չենք յիշեր արտեղ Tempsի պէս հին թերթերը որոնք իրենց հայաստանութեամբ հանրաձանօթ են արդէն:

Le Monde Nouveau Diplomatique Թերթը որ նոր սկսած է հրատարակուել Փարիզ, մարտ 17ի թուին մէջ, A. F. Frangulis ստորագրութեամբ և l'Arménie devant la Conférence de la Paix վերնագրով երկար յօդուած մը հրատարակած է որով Հայերին վրայ մանրամաս տեղեկութիւններ կուտայ և խաղաղութեան խորհրդածրոյէն իրենց ըրած պահանջները կը պաշտպանէ:

L'Eglise Libre փարիզեան օրաթերթը մարտ 7ի թուին մէջ հրատարակած է Հ. Ս. Կրեմլեանի յատկապէս գրած մէկ արձակ բանաստեղծութիւնէն հետեւած մը՝ իրիւրողը Բիէր Լոթիի թիւրքապաշտպան գրութիւններին դէմ:

Le Journal օրաթերթը կը շարունակէ յաճախ տեղեկութիւններ տալ Հայերի մասին:

L'clair մարտ 1ի թուին մէջ երկար յօդուած մը նուիրած է Հայերի պահանջներին պաշտպանութեան, Սալ աէլ Սկրի գիւղէօրի մէջ Տ. Ս. Չօպանեանի նախագահութեամբ կազմուած բանախօսական հանդէսին աթիով:

Չերկարելու համար այս ցանկը կը վերջաննք մամուլու ուշադրութիւն հրահրելով La France Extérieure անուն շարաթաթերթին վրայ որի խմբագրապետը, Տ. Բօլ Բուլէի, կարող գրել մը, գրեթէ ամէն շաբաթ իր խմբագրականները կը նուիրէ Հայութեան: Սոյն շարաթաթերթի մէկ օրինակի գինն է 20 սանդիւ և խմբագրատան հասցեն 14, rue Taitbout, Paris:

ՃԱԿԱՍԱՄԱՐՏ

Օրաթերթ

Բարբարոս Թիւրք դահիճների ձեռքով հայ ազատութեան գոհուած ԱՋԱՍԱՄԱՐՏ լրագրի ընթերցողները կրնան գէթ միևնույն ժամանակ իմանալով որ անոր անիւններէն վերածնած է այժմ ՃԱԿԱՍԱՄԱՐՏ լրագիրը: «Ճակասամարտ» ժառանգած է իր ծնողների կողովն ու գաղափարները եւ կը շարունակէ անոնց կտակած ազատամարտը:

Տարեկան բաժնորդագինն է արտասահմանի համար 70 ֆրանկ, վեցամսային 35 ֆր.: Հասցեն «Djagadamart» Journal arménien, Rue Cabristan N. 37. Péra. Constantinople.

ՎԱՀԱՆ ՉԵՐԱՋ

Մարտի 15ին Կովկաս գացած կա. մաւորներէ մին, իմնապետ Տ. Վահան Չերագ, Տ. Մինաս Չերագի եղբորը զին, փեարվար 3ին Շուշիէն բարեկամի մը գրած է անգլիական զինուորական թղթատարով:

Գորիսէն Վարաբաղի ոստանը եկալ երէկ: Անգլիացիներն ու Անգլիացիներուն միջև Թարգմանի պաշտոն կը վարեմ այժմ: Պոլիսէն ու առհասարակ արտա-

սահմանէն լուր չունինք ըսաւ: Սաստիկ կուխներ ունեցանք, մեծ գրկանքներ կըրեցինք, այլ առողջ ենք, եւ խաղաղութեան վեհաժողովէն կ'ակնկալենք մեծ ու անբաժան Հայաստան մը, Շուշիէն Սրվազ, Ալեքսանդրոպէն Մէրսին, Երզնկաէն Տիգրանակերտ:

ՏՕԳՎ. ԹԻՐԱՆՔԵԱՆ ԽԱՆԻ ՄԱՆՐ

Մեզ կը գուժեն Տօղգ. Յ. Թիւրեաքեան խանի մահը որ պատահած է մարտի 1ին Նիւ Եորքի հիւանդանոցին մէջ ուր փոխադրուած էր մի քանի շաբաթէ ի վեր:

Հանգուցեալը ծնած էր Կեսարիա և իր բժշկական ուսումը առած ֆրանսիացի մէջուրիէ կը թղթակցէր Կ. պօլսոյ «Մանգուժէի Էֆ. քեաք» լրագրին, իր ուսանողական վիճակի մէջ իսկ ազգային խնդիրների ձայնակցել և մասնակցել փոփոքելով:

Բժշկական վկայագրին ստանալով Կ. պօլսոյ վերադառնալէն յետոյ առիթ գործօն մասնակցութիւն մ'ունեցած է ազգային խնդիրներին մէջ: Երեսփոխան ընտրուած և իր պաշտօնակիցների յարգանքն ու համարումը վայելելով բարձրացած է նախ իսկ Ալլաշին ժողովի Աստուպետութեան անդամը: Այդ միջոցին, Մուլղան Համիտի բռնապետական կառավարութիւնը որ ամէն բանէ կը կասկածէր, ձերբակալել տուաւ Տօղգ. Յ. Թիւրեաքեանը իբրև անդամ յեզափոխական ընկերութեան և ժամանակ մը բանտը պահելէ յետոյ արձակեց: Տօղգ. Թիւրեաքեան անցաւ Պարսկաստան ուր Շահի բժըշկական պաշտօնն ստանձնելով: Խանութեան տիրութիւն արժանացաւ Տօղգ. Թիւրեաքեան խան որ քով հայապէտ մ'էր, Պարսկաստանի մէջ հեռուցեալ նաև հին Պարսիկներէ պահպանեցին ուսման:

Իր փեսային՝ վաճառական Տ. Թաւաշանեանի Նիւ Եորքի մէջ կուտակուցական խնդիրների հետեանքով վատարար պաննուելէն յետոյ, Տօղգ. Թիւրեաքեան գնաց Նիւ Եորք, իր զաւակների մօտ անցունել իր կեանքի վերջին մասը: Թէև ծերացած, 73 տարեկան, բայց գրիչը ձեռքէն չէր ձգած և բանասիրական, լեզուական, պատմական և ազգային գաղափարները իր վրայ լուրջ ուսումնասիրութիւններ կը գրէր և կըրօցած ինչպէ կը գործակցէր ազգային ձեռնարկներին:

Իր մահով Հայ ազգը կորսնցուց փորձառու հանրային գործիչ մը և բազմահմուտ բանասէր մը:

Ա. ՏԵՐ-ՄԱՐՈՒԲԵԱՆ

Յաւով կիմանանք որ Փարիզ գրտուող անուանի հայ արձանագործ Ա. Տէր. Մարութեան մեռած է, վերջերս գրամական և ֆիզիկական առաւել վիճակ մ'ունենալէ յետոյ: Ծնած լինելով Երևանի մէջ 1875ին, դեռ հաղիւ 44 տարեկան էր և բազմ-

մարդիւն գործունէութեան համար ապագայ մ'ունէր իր առջև եթէ տը խուր հանգամանքներ կարճեցուցած չլիէին իր կեանքը:

19 տարեկան հասակին մէջ Մոսկուա և Պետերբուրգ երթարով արձանագործութեան արհեստին հետեւելէ յետոյ, փարիզ եկած և Գեղարւեստական վարժարանին աշակերտելով կատարելագործած էր իր ուսումը, ինք շինած է Գամառ Քաթիպաի արձանը որ կանգնուած է Նոր Նախիկանի մէջ, խորիմեան հայրկի արձանիկը որը փարիզի Հայ գաղութը գնելով նուէր զրկած էր էջմիածին, դերասան Աղամեանի արձանը և այլ արձաններ որոնք նոյն իսկ Ֆրանսացիներէ գնահատուած և գնուած են: Վերջերս շինած էր և խաչատուր Արովեանի արձանը որ Երևան պիտի զրկուէր, բայց պատերազմը վրայ գալով դժուարութիւններ ծագեցան և այդ գործը ձեաց երեսի վրայ:

**ԽԱՂԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ**

Խաղաղութեան Խորհրդաժողովը կը շահանջ շուտով զուտ հանել իր աշխատանքը: Հասնեակի ժողովին տեղ չորս պետութիւններ գլխաւորները միայն, Գլխաւոր, Լոյս ճօրճ, Ուիլսոն և Օրլանտո, աւելն օր մէկտեղ կուզան և յանձնաժողովներէն եկած տեղեկագիրները նկատի առնելով իրենց որոշումներ կուտան խաղաղական գաղափարն մէջ մտցուելիք պայմաններ մասին: Քարտուղարներ անգամ ներկայ չեն գտնուիր այս քառեակի խորհրդակցական ժողովներին, այլ մօտակայ սենեակի մը մէջ պատրաստ կը գտնուին ուրիշ կը կանչուին ի հարկին: Ժողովին մէջ տարակարծութեան պատճառով իրար հետ եղած վիճարանութիւնները այս կերպով գաղանի կը պահուին որպէսզի թշնամիները չօգտուին տարաձայնութիւններէն: Արդումները արուելէն յետոյ կը հրատարակուին ի հարկին:

— Չորսընեան նայելով, խաղաղութեան նախնական պայմանագիրը պատրաստուած և վերջացած կը լինի քիչ օրէն և գերման պատուիրակները կը հրաւիրուին, անոնց ընդունելութեան ներկայացուելու համար:

**ՀՈՒՆԳԱՐԻԱ**

Ռուսական պօլիէթիզմը Հունգարիա մէջ ալ գործակցութեան ասպարէզ գտաւ: Հունգար պօլիէթիզմը տապալելով իրենց նորահաստատ հանրապետական կառավարութիւնը, բանւորների և զիւղացիների սովիէզներ (ժողով) հաստատած և կառավարութիւնն իրենց ձեռք անցուցած են: Ասոնք համաձայնական տէրութիւններին գէտ թշնամական դիրք բռնած են: Ռուս սպայ մը կարմիր զօրքերի զուտն անցած Պուտարեշտի մէջ Աւսթրիայի զեպականաւորներ մտեր և հոն գտնուած 2 միլիոն բուրժուազրուներ բաժնէր է զօրքերին: Գեապանատան պաշտօնեայնները ձերբակալու և սարբեր բռնաարկեր են:

— Ֆրանսական կառավարութիւնը զօրավար Մանտենը կը զրկէ Ռուսիաներին օգնելու համար Հունգարիաի գէտ:

**ՆԱՄԱԿԱՏՈՒՓ**

Մարտիլ. Գ. Զրբաշխեան. — Չեզ համար նամակ կայ: Ստանալու համար անցէք Ա. Րաբիտի գրասենեակը, Սան Բալթ. Մ. Գօրուգեան. — Չեր 5 ֆրանկը փոխանցուեցաւ Գօրինո:

**ՆՈՐ ՍՍՏՅՈՒՄ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ժողովուրդի Ձայն անուն շաբաթաթերթ մը սկսած է հրատարակուիլ փարիզի մէջ ուր 3.000 հոգիէ բաղկացած Հայ գաղութը կուենայ այժմ հայերէն լեզուով 3 թերթ, Նոր թերթը կը խոստանայ աւելի խիզախօրէն բարձրացնել ժողովուրդի ձայնը:

Թէև մեր օտացած մի քանի թիւերին մէջ առաջնորդող յօդուածները Ք. Գառնիկ ստորագրութիւնը կը կրեն, բայց յայտարարուած չէ թէ որի կողմէն կը հրատարակուի թերթը: Հասցէն է Joghovourti Tzain, 96 rue Monge, Paris, ուր պէտք է զրկել թղթակցութիւն և զրամ: Տարեկան բաժնորդագիրն է փարիզ 18 ֆր., Ֆրանսա և գաղթավայրեր 20 ֆր., օտար երկիրներ 25 ֆր.:

Բազմավէպը վերսկսած է ամէն ա. միս կանոնաւորապէս հրատարակուիլ ներկայ 1919 թուականի յունվարէն: Ստացած ենք արդէն մարտ ամսի թերթը որ գրական, բանասիրական, պատմական յօդուածներէ զատ կը պարունակէ ազգային ոգին խանդավառող շատ յօդուածներ և տեղեկութիւններ: Պատկերազարդ է և տպագրութիւնը գեղեցիկ, սովորական: Նին համեմատ Տարեկան բաժնեգիրն է 15 ֆր. (3 տլր. ամերիկեան): Հասցէն Redaction de la revue «Pazmayeb». St.-Lazare. VENISE (Italie):

LA PLAINTE de l'ARMÉNIE pour violon avec accompagnement de piano ou orchestre, par WARTAN MAHOKIAN.

(Գեղարուեստագէտ Տ. վարդան Մախոկեան Տրայպիզանցի որ արդէն իբրև ծովանկարիչ մեծ համբաւ հանած էր, իբրև երգահան ևս կուգայ մեծ տաղանդ մը երևան հանել, իր ձայնագրած « Լա բլէնդ տը Լ'Արմէնի », որը, ինչպէս ինք կը գրէ, նուիրած է իր սիրելի հայրենիք Հայաստանին, երբ առաջին անգամ նուագուեցաւ այս տարի յունվար 13ին Մանդէ Գարօի նուագահան զէսներին, մեծ յուզում յառաջ բերու ունկնդիրներին մէջ որոնք ծափերով կրկնել տուին: Պէտքի թագաւորական թատրոնի նուագախումբի զլիտուորը և Մանդէ Գարօի Մեծ Նուագահան զէսների ու Օրէրաի Ս. Ղուծակահարը իրենց բարձր գնահատման և հիացման զրութիւններ ուղղած են Տ. վ. Մախոկեան:

նին և գանոնք հրատարակութեան տուած:

Այս ձայնագրուած նուագերգութիւնը ստանալու կամ այդ մասին ուէ կարգադրութեան համար գիւմել հրատարակչին որի հասցէն է M. Maillot, 29, avenue de la Gare. Nice

The Tragedy of Armenia. A brief study and interpretation by Bertha Pazanian. With an introduction by Secretary James L. Barton, D. D., of the American Board. The pilgrim press. Boston, Mass. Chicago, Ill.

(Ամերիկայի Հայ Ազգային Միութեան կողմէն Ամերիկացիներին ուղարկուած ընծայուած է այս գիրքը, որ կը ներկայացնէ Հայերի կրած դարաւոր տառապանքները և իրենց ազատութեան իրաւունքը):

A. P. Hagopian. L'Arménie et la Guerre. Le point de vue d'un Arménien. Préface du Très honorable Wicomte Bryce, O. M. Paris, Hagop Turabian, éditeur. 227, bld. Raspail.

(Տ. Ա. Պ. Յակոբեանի գրած Armenia & the War ծանօթ գրքի ֆրանսերէն թարգմանութիւնն է այս գիրքն է 5 ֆր.: Դիմել հրատարակչին):

**ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ**

**ԿԸ ՓՆՏՈՒԻՆ**

Մարտիլ բնակող Պարտիզակցի Տ. Մկրտիչ Գր. Ճրկայեան կը փնտրուէ իր ծնողները՝ Գրիգոր և Մաքրուհի, քուրբը՝ Բերկուհի և Անգին և եղբայրը՝ Օննիկ:

Կը ինչրուի ուէ տեղեկութիւն ունեցողներէն հաղորդել Ա. Րաբիտի խմբագրութեան:

Կը փնտրու մայրս Արմէնուհի վարժպետեան, եղբայրս Սուրէն վարժպետեան և քուրս Տիկին Սիւրանուշ Ճգնաւորեան որոնք պատերազմէն առաջ կը գտնուէին Պօլսոյ իւսկիւտար արուարձանը, Սէլամուզ թաղի Սուրբ Խաչ եկեղեցիին մօտ: Իրենց մասին լուր ունեցողները թող հաճին իմացնել ինձ:

Հասցէ՝ Mechanic Puzant Varjabedian Post Engrs A. P. O. 902 A. E. F. Bourge (France)

Կը խնդրուի պոլսահայ թերթերէն արտատպել:

Տ. Կիրակոս Հէլվածեան, Սիվրի-հիարացի, Պէրլութի կողմերը ըլլալ կը կարծուի. ինքը թիւրքիսէն ազատուած լինելով, կամաւոր զրուած է Հայկական Լէգէոնին մէջ:

Իր մասին տեղեկութիւն ունեցողները թող հաճին իմացնել Յակոբ թիւֆէնքճեանին՝ 349, Avenue du Prado. Marseille

**ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ**

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ գիրքերը, որոնց արժէքները նշանակուած են իրենց առջև:

Մարտիլէն դուրս զրկելու ճանապարհածախքը գնողին վրայ է. ուստի հայերի դիւրութեան համար կը նշանակենք թէ՛ Մարտիլի մէջ ծախուելու գիրքերը և թէ՛ փոստով ուրիշ քաղաք զրկուելու գիրքերը (Այս վերջինները փակագծի մէջ զրուածներն են): Արժէքը կանխիկ շտապուած գիրք չլրկուիր: Արձանագրուած (recommandé—registered) ծրարով ստանալու գրողները պէտք է 25 սանդիմ աւելի զրկեն իւրաքանչիւր ծրարի համար որ 2 քիլոէն աւելի պէտք չէ կռնէ:

Է. տէ Ամիխս. — ՍԻՐՏ. Գիրք տղայոց համար:

(Թէեւ հեղինակը «տղայոց համար» պատրաստուած կը ներկայացնէ իր այս գիրքը, բայց ամէն հասակի անտեր ալ որոնք գիտեն զգալ, սիրտ ունին եւ կարեւորութիւն կուտան սրտի մշակութեան գործին, մեծ հաճեցողով պիտի կարդան այս գիրքը որ շատ մը լեզուների թարգմանուած լինելէ զատ՝ 2 անգամ ազանազան անտերէ հայերէնի թարգմանուելով տպագրուած է (մէկը թիֆլիս եւ միւսը Կ. պօլլիս) եւ երրորդ անգամ լոյս կը տեսնէ այժմ Վենետիկի մէջ աւելի կատարելագործուած թարգմանութեամբ մը որ ըրած է Հ. Ալեքսիս Յովսէփեան: Բազմաթիւ պատկերներով զարդարուած է: Իտալերէն ընագիրը 699 անգամ տպագրուածեան արժանացած է ցարդ. 4 ֆր. եւ 20 սնդ. (4,50):

Նոր իրագիտութիւն պատկերազարդ: Երկասիրեց Պօլոս վ. Գաֆթան. Ա. շէրլան. Բ. սպարթ. 1,60 (1,80):

Նոյն Բ. շէրլան Բ. սպարթ. 1,60 (1,80)

Իսովբրոսնց. — Իրմարան կամ Քերակա՛նութիւն անգլիերէն լեզուի. 2 հատոր, Վէրի ԲՏՈՎ, գործնական հրահանգներով որոնց Բազմերթն ալ կայ գործին վերջը: 2 հատորը 5 ֆր. (5 5/2 ֆր.):

Յարեթ Մ. Իսկէնտէրեան. — Սուէտիոյ ապստամբութիւնը. (Սուէտիայի Հայ քաջերին՝ չկոտորուելու համար թիւրքերին գէտ ապստամբելով լինները քաջուելուն և յետոյ Ֆրանսական մարտանաւի մը միջոցով ազատուելուն պատմութիւնն է) 1 ֆր. 20 (1,30):

P. S. J'emian. — Nos Morts. 1917. (Հայաստանի մարտիրոսութեան նկատմամբ Ս. Երեմեանի ֆրանսերէն բանաստեղծական մէկ գրուածքն է որ շատ մը թերթերի և զրագէտների կողմէն ներդրողով յիշատակութեան արժանացած է) Գր. 0,50 սնդ. (0,60):

Haic & Belus. National Dram. Composed by M. J. Zorab. Calcutta. 895. Գրն 2,40 (2,50):

ՏԵՕՐԵՆ.—ԻՄՔԱԳԻՒ Մ. ՓՈՐՓՈՒՆՉԱԼԵԱՆ ՄԱՐՏԵՅԻ.

Հայերէն Տպարան Մ. Փարբագայեանի Le Gérant: François CARRIERE. Marseille. — Imp. marie du Midi